

ՀԱՄԱԲԱՐՁՈՒՄՆ

ԶԻՔՆԵՆԱԿ ԼԵՐԸ ԵՐՈՒՄԱՎԷԼԻՄԻ ԵՐԵՂԵՂԵՐՆ
կողմն է. այս տեղէն Յիսուս Քրիստոս համ-
բարձաւ իւր աշակերտները օրհնելով. ուստի
Քրիստոնեայք Համբարձումս յեռ փառուանեն:

Քրիստոսի ոտնատեղւոյն վրայ ձեղինէ թա-
ղուելոյն ժամանակէն շինուած եկեղեցի կար,
որ Պաքսից Խոսրով Թագաւորի յարձակման
ժամանակ (14-ին աւերեցաւ: Մագնսգոս երէցը
Պարսկաստան գերի վարեալ Ջաքարիա Պատ-
րիարքին տեղապահ նստաւ, եկեղեցին նորո-
գեց, ինչպէս որ անկէ վերջը եկող ուխտաւոր
պատմագիրք կը ստորագրեն, բոլորածն է
վերի կողմը բաց: Մինչև խաչակրաց ժամա-
նակ եկեղեցին պայծառ մնացած էր, բայց
երբ իշխանութիւնը վերստին Մանուկեանաց
ձեռքն տեցաւ, կրկին խառնաբոյրեցին եկեղեցին,
որոյ աւերակ հիմերը տակաւին կ'երևին բա-
կին մէջ:

Արարական ձեռով շինուած արդի մատուռը,
որ մէջը Միհրապ ունի, յայտնի չէ թէ ո՞ր դա-
րու մէջ կառուցուած է. աւանկական է, 1-7
մէթր տրամագծով է վրան գմբէթով. սոյն ե-
կեղեցին Հայոց սեպհականութեամբ է անյայտ
թուականաւ. նախ հրամանագիր կ'առնեն, որ
կ'արգիլէ գիւղացւոց Հայոց վանքին մօտ տուն
շինելու. ժամանակէ յետոյ Հայոց Միարանու-
թիւնը տանկէ դուռն ձգուելով՝ Ծէլլարէ վանքը
կ'աւրին է պարսպին կից մզկիթ մի կը շինեն
հանդերձ մինարետով: Երկրորդ անգամ Հայք
հրամանագիր կը ստանան Սուլթան Ամէտ Ա-ի
օրով, չիհրէթի 1022ին, որով արտօնութիւն կը
որուրէի Հայոց՝ պարսպը շինելու և գմբէթը նո-
րոգելու: Այս հրովարտակին մէջ կը յիշուի, որ
ուրիշ քրիստոնեայ ազգերն ևս իրաւունք ու-
նին սևաւ և պաշտօն կատարելու: Երբ ըգ-
անգամ հրամանագիր կ'ընդունին Հայք, որ
կ'արգիլէ գիւղացւոց պարսպին մէջ մեռեալ
թաղել:

Քրիստոսի ոտնատեղւոյն գմբէթը Պատուե-
լով 1834ի չարժեն, Լատինք ուղեցին որ նորո-
գեն. Հայք և Յոյք ընդգիմացան, որով դա-
տաւորի հրամանաւ երեք ազգք ընկերութեամբ
շինեցին: Հայք ընկերութեամբ եղած շինու-
թիւնը իրենց իրաւունց զէմ համարելով՝ բողոք-
եցին և վերոյիշեալ երեք հրովարտակները
Դատաւորին միջոցաւ ժողովին ներկայացու-
ցին. ժողովը վաւերական գտնելով հրովար-
տակները՝ իլալ տուաւ, որով Բ. Դուռը 1250,
1251 և 1252 թուականներուն (չիհրէթի) հրո-
վարտակներ շնորհեց Հայոց, նորոգութիւն ը-
նելու և սննհակներ շինելու համար:

Հայք անմիջապէս սկսան աշակողմը, կէս
մը բաւկին մէջ կէս մը բաւկէն դուռը, սեղանա-

կան երկրի վրայ կրկնայարկ սննհակներ շի-
նել, պարսպը նորոգել, ամբողջ գաւիթը թա-
րայտակել, գմբէթին տակ Սեղան շինել և
կանթեղաք է այլ եկեղեցական սպասուք վար-
դարել, ուր անխափան ամէն հինգշաբթի է
կիւրաքի օրը պատարագ կը մատուցանէին և
արտաքին դռնէն մինչև մատուռին դրան կից
տախտակաշէն ծածք յօրինել առանց այլոց
իրաւանց դպչելու. հիւսիսային կողմը նոր
ջրհոր մը շինեցին և հարաւային կողմի ջրհորը
նորոգեցին: Լատինք և Յոյք չկարենալով
տանիլ Հայոց ձեռքը եկած շինութեանը՝ թա-
նիցս մարդ զրկեցին ի Պոլիս և յԵփրատոս և
Գաղղիոյ աւ Ռուսիոյ Ինսպաններու ձեռք
Թաղրի տունին Տէրութեան՝ գանգատելով յա-
նիրաւի, իրրկ թէ Հայք արգելք կ'ըլլային Բ. Դուռ
Քրիստոնէից ուխտին: Ասոր վրայ հրաման
կ'ելնէ, որ քննութիւն յինի Երուսաղէմի Դա-
տարանին մէջ. Լատինք այս թուղթը, որ
Շաթրիքատէ Արիֆի անուն երեւելի անձին հետ
զրկուած էր քննութեան պաշտօնով՝ այնպէս
ներկայացուցին, որպէս թէ Հայոց շինութիւնը
աւրիւտ համար տրուած լինէր և Շաթրիքատէ
ևս Դեսպանին կողմէն շահուած լինելով՝ ըստ
հաճոյից քննութեան կ'առնու շամբարձման
տեղը և նոր շինութիւնները: Այս քննութեան
յետոյ Բ. Դուռը Դեսպանաց թախանձանագ զի-
ջանելով՝ հրաման կը տայ բաւկին և մատուռին
մէջ եղած շինութիւնները կործանելու: Սոյն
հրամանագրին վրայ Հայք կարեւիւր խոցուե-
լով՝ շուղեցին նաև պաշտպանել բաւկէն դուռ
իրենց սեպհական գետնոյն վրայ եղած սնն-
հակները: Վերջին հրամանագիրը կարգացուե-
լու օրը Լատին և Յոյն միարանութիւնը իրենց
արարացի բազմամբոխ ժողովրդօք գնացին
Զիքնեանց լեռը և կործանեցին Հայոց ամբողջ
շինութիւնները թմրկօք և պարուք, և նախ-
նական վիճակին հասցնեցին:

Մինչև ցարդ այս սրբազան վայրը միևնոյն
անարգ վիճակին մէջ է. բանային գիւղացւոց
ձեռքն է և նորոգութեան ծախքը տէրութեան
գանձէն կը լինի: Տարւոյն մէջ միայն երկու
անգամ, այն է Մեծ Պահոց մէջ և Քրիստոսի
Համբարձման օրը պատարագ կը մատուցանեն
Հայք, իսկ միւս ազգերը միայն Համբարձման
օրը: Նոյնցմէ Միարանք առջի երեկոյին եր-
թալով՝ արտատակին յուսնալով կը մաքրեն և
բաւկին մէջ հիւսիսային անկիւնը ժամբարձու-
թիւն կը կատարեն և առաւօտուն սուրբ պա-
տարագ կը մատուցանեն:

Բովանդակութիւն Ազգային Սեղանակնութեանց

(Եջ 94 - 99)

